ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

05.09.2013թ.
210-ի 2

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
նախագահ պարոն Գագիկ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

2013թ.-ի օգոստոսի 20-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2012-2013թ.թ.-ին Ucom ընկերության հետ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն քանի՞ պայմանագիր է կնքել,
2. Խնդրում ենք հայտնել յուրաքանչյուր պայմանագրի նպատակը (պայմանագրի առարկան) եւ արժեքը:

2013թ.-ի օգոստոսի 27 թվագրմամբ պատասխան գրությամբ ՊԵԿ-ը տրմադրել է հղումով պատասխան՝ հայտնելով որ պահանջվող տեղեկությունները հրապարակված են www.azdarar.am, ինչպես նաեւ www.e-gov.am կայքերում:

Գտնում ենք, որ ՊԵԿ-ի կատարած հղումը պատշաճ հղում չէ՝ քանի որ նախ, ՊԵԿ-ը չի ներկայացրել այն հստակ հասցեն՝ www.azdarar.am եւ www.e-gov.am կայքերի այն բաժինները, որտեղ հրապարակված են պայմանագրերը, բացի այդ, www.e-gov.am կայքում ԻԱԿ-ը կարողացել է գտնել ՊԵԿ-ի կնքած պայմանագրերի մասին որոշ տեղեկություններ (ինտերակտիվ բյուջեում կամ "Մեկ անձից կատարվող գնումներ" բաժնում), սակայն այս կայքում ոչ բոլոր պայմանագրերի մասին խնդրված տեղեկություններն են ներկայացված, իսկ www.azdarar.am կայքում ներկայացված տվյալներում ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները մատչելի չեն (ինչը "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի պահանջ է), ուստի եւ հասու չեն ԻԱԿ-ին:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ ամբողջական տեղեկությունները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան